Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝«Պտղավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝Սարուխանյան Կարինե

Ուսուցչի օգնական՝ Մամուլյան Տաթևիկ

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը---- 5

2.1 Անհատական ուսուցման պլան----------5

2.2 ԱՈԻՊ-ի լրացման կարգը----------10

3. Եզրակացություն---------- -------- 15

4. Օգտագործված գրականության ցանկ ---------- 16

Ներածություն

Մարդու գերակա իրավունքների շարքում կարևորներից է կրթության իրավունքը, որի հիմնահարցերը մշտապես եղել և մնում են բոլոր քաղաքակիրթ երկրների ու ժողովուրդների ուշադրության կենտրոնում: Այսօր էլ անհնար է ունենալ կրթության բարձր որակ և լինել մրցունակ, եթե երկրի կրթության համակարգը չի ինտեգրվում միջազգային կրթական գործընթացներին և չի ապահովում միջազգային չափանիշներ: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ համակարգը զարգանա բարեփոխումների ճանապարհով, ինչն այսօր որդեգրել է Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը: Այդ բարեփոխումները խարսխվում են մարդասիրական , ժողովրդավարական կրթության արժեքների վրա ուր առանձնահատուկ տեղ են գրավում հատուկ կրթության հիմնահարցերը, մասնավորապես՝ ներառական ուսուցմամբ կրթության խնդիրները: Այս համատեքստում **արդիական** են դառնում զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին ցուցաբերվող սոցիալ-մանկավարժական օգնության կազմակերպման հարցերը, դրանց լուծման ուղիները, ինչպես նաև ԱՈՒՊ –ով իրականացվող կրթությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Սույն հետազոտական աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել ԱՈՒՊ –ով իրականացվող կրթությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքում և հասկանալ դրա կարևորությունը :

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն են՝**

1. Խորացնել գիտելիքները ԱՈՒՊ – ի վերաբերյալ :
2. Ուսումնասիրել ԱՈՒՊ-ի լրացման կարգը

Ներառական կրթությունից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն

ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը:

Ներառական կրթության կայացումը առողջ հասարակության ձևավորման կարևոր մասերից է, քանի որ այն ենթադրում է հասարակության յուրաքանչյուր օղակի լիարժեք ընդունում և ներուժի օգտագործում: Հայաստանում կրթության ոլորտի զարգացման գործում նոր և կարևորագույն շրջան սկսվեց ներառական կրթության ներդրումից հետո, քանի որ կրթության կազմակերպման հիմնաքարը մարդասիրական ավելի խորը ու հիմնավոր գաղափարների ներդրումն է:

2. Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

2.1 Անհատական ուսուցման պլան

Հայաստանում ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխայի կրթությունը կազմակերպվում է նրա ԱՈՒՊ –ում սահմանված նպատակներին համապատասխան: ՀՀ Կրթության մասին օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին 2014 թ –ին ընդունված օրենքի հոդված 3-ի 10.8 կետի համաձայն՝ ԱՈՒՊ –ը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները/ ներառյալ՝ աջակցող ծառայությունները/: ԱՈՒՊ-ը գրավոր փաստաթուղթ է, որտեղ սահմանվում են ԿԱՊԿՈՒ երեխայի ուսումնական , սոցիալական և ֆունկցիոնալ առանձնահատուկ նպատակները: Ներկայացնում է աշակերտի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ նպատակներին հասնելու յուրահատուկ միջամտություններ: Այն էական նշանակություն ունի դպրոցում, որովհետև ներառական միջավայրում յուրաքանչյուր երեխայի դեպքում կարող են կիրառվել դասավանդման յուրահատուկ մոտեցումներ և ակնկալվել տարբեր կրթական վերջնարդյունքներ:

ԱՈՒՊ-ը հաստատված ձեւաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների եւ հանրակրթության պետական չափորոշիչների եւ ծրագրերի հիման վրա:ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության հիմքն է: Ուսուցիչներից շատերը ծանրաբեռնվածության և անհանգստության զգացողություն են ունենում

ԱՈՒՊ-ի մշակման եւ իրականացման գործընթացների ժամանակ: Այնուամենայնիվ, ուսուցիչները ԱՈՒՊ-ի մշակման թիմի հիմնական մասն են կազմում: ՈՒսուցիչը ոչ միայն օգնում է դասարանում սովորողի առաջընթացի գրանցմանը , այլ նաև նպաստում ուսուցման գործընթացում նրա մասնակցության բարելավմանը, արժեքավոր ներդրում է ունենում այն պլանի մշակման ժամանակ, որը կօգնի իրեն եւ սովորողին հաջողության հասնել հանրակրթության ծրագրերում:

ԱՈՒՊ-ը փաստաթուղթ է, որը ուսուցիչների, դաստիարակների , երեխաների հետ աշխատող մասնագետների և ծնողների համար ուղեցույց է հանդիսանում:

Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը կազմակերպել արդյունավետ:

Սովորողի ԱՈՒՊ-ը կազմվում է դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա: Յուրաքանչյուր սովորողի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմվում է ԱՈՒՊ:

ԱՈՒՊ-ը կազմվում է ներառական կրթությանն աջակցող մասնագետների կողմից՝ ուսուցիչների և ծնողի մասնակցությամբ:

Սովորողը ԱՈՒՊ-ի առանցքն է և ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտրոնը, հետևաբար նրա հնարավոր մասնակցությունը ԱՈՒՊ-ի մշակման գործընթացներին արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ ունենալու կարևոր երաշխիքներից կարող է լինել:

Ծնողը ԱՈՒՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Ծնողի ներգրավվածությունը սկսվում է իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվում է ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման փուլերում:

Ծնողի մասնակցությամբ մշակվող ԱՈՒՊ-ն առավել իրատեսական է, քանի որ այն սահմանելիս հաշվի են առնվում աշակերտի մասին ծնողի տրամադրած շատ

կարևոր տեղեկություններ երեխայի առողջության, տանը և համայնքում նրա դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներառում են ծնողի կողմից սովորողի ուսուցման գործընթացի կամավոր հանձնառությունները:

ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում ծնողը ոչ միայն երեխայի շահերի լավագույն պաշտպանն է, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը:

ՈՒսուցչի օգնական

1. Ուսուցչի օգնականն ԱՈՒՊ-ի մշակման և գործարկման ողջ ընթացքում կապող օղակ է հանդիսանում տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների, ծնողների և աշակերտի միջև՝ նրանց հետ փոխանակելով ցանկացած տեղեկատվություն աշակերտի ուսումնական առաջընթացի և առկա դժվարությունների վերաբերյալ:

2. Ուսուցչի օգնականը ԱՈՒՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է:

3. Ուսուցչի օգնականը ուսուցիչների կողմից սովորողի ԱՈՒՊ-ի պատշաճ լրացման աշխատանքների համակարգողն է:

ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացում ուսուցչի օգնականի պարտականությունները հանգում են հետևյալին.

- Ուսուցիչների համաձայնությամբ՝ ԱՈՒՊ-ի համապատասխան բաժնում պլանավորում է իր կողմից աշակերտին տրամադրվող աջակցությունները:
- Մշտադիտարկում և ԱՈՒՊ-ի համապատասխան բաժիններում արձանագրում է ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների՝

խնդիրների ձեռքբերման ուղղությամբ աշակերտի արձանագրած հաջողություններն ու առաջընթացը, ինչպես նաև դեռևս առկա թերացումները:

- Մշտապես մասնակցում է ԱՈԻՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացներին:

ՈՒՍՈՒՑԻՉ

Սովորողի ԱՈԻՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվությունը կրում է ուսուցիչը (դասվար, առարկայական ուսուցիչներ): Այդ պատասխանատվությունը սկսվում է ԱՈԻՊ-ի մշակման փուլից և շարունակվում ԱՈԻՊ-ի իրականացման և գնահատման փուլերում: Ուսուցիչը նաև տվյալ աշակերտի ԱՈԻՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարն է: Մասնավորապես նա.

- Աշակերտի հետ աշխատող մասնագետներին և ծնողներին տեղեկատվություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին:

- Դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը:

- Մշակում է տվյալ առարկայից աշակերտի համար սահմանվող տարեկան նպատակներն ու ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները:

- Պլանավորում և իրականացնում է աշակերտի ԱՈԻՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը:

- Մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները:

- Գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ

Սովորողների անհատական ուսուցման պլանների մշակման և իրագործման մասով դպրոցի տնօրենի գործունեությունը կապվում է գործընթացի համակարգման և անհրաժեշտ միջավայրի ապահովման հետ: Մասնավորապես տնօրենն ապահովում է.

1. Ծնողի մասնակցությունը ԱՈՒՊ-ի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին:

2. Ծնողի ստորագրությամբ հաստատված համաձայնությունը՝ մշակված ԱՈՒՊ-ն իրականացնելու համար:

3. Աշակերտին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծավալները, տևողությունը և ժամանակահատվածը:

4. ԱՈՒՊ-ի իրականացման համար անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության, հարմարեցված նյութերի և պարագաների տրամադրումը:

5. Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների մասնակցությունը տարբեր դասընթացների և վերապատրաստումների՝ դպրոցում ներառական կրթական գործընթացը բարելավելու նպատակով:

2.2 ԱՈՒՊ-ի լրացման կարգը

Ըստ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի N 88-Ն հրամանի հավելվածի՝ մշակվել են անհատական ուսուցման նոր պլաններ, որոնք իրենց մեջ ներառում են հետևյալ բաղադրիչները.

1. ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Անհատական ուսուցման պլանի առաջին կետը ներառում է ընդհանուր կոնտակտային տեղեկատվություն երեխայի մասին: Այս կետը պարտադիր լրացվում է ամբողջությամբ, իսկ դրանում անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է դպրոցի տնօրինության և աշակերտի ծնողների (նաև աշակերտի) կողմից:

ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. ԱՈՒՊ-ի երկրորդ բաժինը ընդհանուր տեղեկատվություն է տալիս աշակերտի մասին:

2.1 բաժնում լրացվում են բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) արդյունքում ճանաչված հաշմանդամության առկայությունը կամ բացակայությունը:

2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում բաժինը լրացվում է թիմի հանդիպման և քննարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա: Այն պետք է արտացոլի աշակերտի ուժեղ կողմերը նրա ակադեմիական հմտությունների, կյանքի և առօրյա կենցաղավարության հմտությունների, ֆիզիկական հմտությունների, վարքագծի կամ այլ ոլորտների վերաբերյալ: Տեղեկատվությունը գրանցվում է երեք տեսանկյունից՝ ըստ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի, աշակերտի ծնողի և աշակերտի:

2.3 Այս բաժնում լրացվում են կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանն ըստ սովորողի խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կապված խնդիրները: Լրացվում են երեխայի գնահատման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը: Այսինքն նշվում է, թե ֆունկցիաների 8 ոլորտներում ինչ մակարդակ է արձանագրված: Նշված ֆունկցիայի դիմաց դրվում և գրառվում է գնահատման տեղեկատվությունը/1-4/: Օրինակ՝ ինտելեկտի (մտավոր) 1-ին աստիճան:

2.4 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Այս բաժնում լրացվում են աշակերտի գործունեությունը և մասնակցությունը .

սովորելը և գիտելիքներ կիրառելը (դիտելը/նայելը/, լսելը,տեղեկություններ հավաքելը, լեզու սովորելը, կրկնելու միջոցով սովորելը, հմտություններ ձեռք բերելը, ուշադրությունը պահպանելը, մտածելը, կարդալը/ կարդալ սովորելը/, գրելը /գրել սովորելը/, հաշվելը /հաշվել սովորելը/, խնդիրներ լուծելը, որոշումներ կայացնելը), ընդհանուր առաջադրանքները և պահանջները (առօրյա կյանքը կազմակերպելը, սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կիրառելը, սեփական վարքագիծը կառավարելը), հաղորդակցությունը (խոսելը, զրույցը), շարժունակությունը (դաստակի նուրբ շարժումներ կատարելը, տեղաշարժվելը), ինքնասպասարկումը(բնական կարիքները հոգալը, հագնվելը ուտելը), կենցաղը, միջանձնային շփումը և հարաբերությունները (բարդ միջանձնային փոխհարաբերությունները), կյանքի հիմնական բնագավառները (դպրոցական կրթությունը), համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը:

3. Այս բաժնում լրացվում են սովորողին, նրա մանկավարժներին և ծնողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պլանավորումը:

3.1 Բաժնում լրացվում են ուսումնական հաստատության մակարդակի ծառայություններ.

աջակցություն(ուսուցման և ուսումնառության գործընթացի մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովում,խելամիտ հարմարեցումների ապահովում,երկարօրյա ուսուցման պլանավորում և իրականացում), մանկավարժ (անհրաժեշտ է կիրառել ուղղորդող հարցադրումներ, որպեսզի երեխան կարողանա ուսումնական գործընթացում իրադարձությունները դասավորել ըստ տրամաբանական հաջորդականության։Անհրաժեշտ է հանձնարարությունը բաժանել քայլերի, հստակեցնել, պարզեցնել և օգտագործել հուշող հարցեր, դիդակտիկ պարագաներ։ Պետք է հանձնարարել սկզբում ավելի հեշտ, հետո ավելի բարդ առաջադրանքներ։Անհրաժեշտ է բանավոր խոսքը զուգակցել դիդակտիկ պարագաների հետ, առաջադրանքը պարզեցնել, բաժանել մի քանի մասերի։Անհրաժեշտ է երեխայի աշխատասեղանը ազատ պահել ուշադրությունը շեղող ավելորդ առարկաներից։Անհրաժեշտ է պարզեցնել, կրկնել առաջադրանքը, ապահովել հետադարձ կապ։Դրական մթնոլորտի ապահովում), ծնող, աշակերտ:

3.2 Այս բաժնում լրացվում են տարածքային մակարդակի ծառայությունները. աջակցություն(դասընթացներ, խորհրդատվություն, մասնագիտական, մեթոդական աջակցություն և այլն), մանկավարժ, ծնող, աշակերտ:

3.3 Այս բաժնում սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գրաֆիկն է:

4. Կետում նշվում են ուսումնական առարկաները, ըստ պետական չափորոշչի.

1. Տվյալ տարում նշվում են ուսումնական պլանով նախատեսված առարկաները

2. Առարկաներ, որոնք սովորողն ուսումնասիրում է տվյալ ուսումնական տարում

3. Առարկաներ, որոնց համար անհրաժեշտ է անհատական պլանավորում

5. Այս բաժնում նշվում են սովորողի երկարաժամկետ՝ տարեկան նպատակներն ըստ առարկաների,կարճաժամկետ՝կարողություններն ու հմտությունները, որոնք ունեն այս պահին եւ, որոնք կապված են նպատակի հետ: <<Արդյունք>> բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ

Նշվում է տարեկան նպատակը, դրանից բխող կարճաժամկետ նպատակները, ուսումնա-մեթոդական աջակցությունը, միջավայրային հարմարեցումները, աջակցող սարքերը և տեխնոլոգիաները, ժամկետը, արդյունքը:

ԱՈՒՊ-ում սովորողի կրթության երկարաժամկետ նպատակների սահմանումը պետք է իրականացվի հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների պարզեցման և հարմարեցման հիման վրա՝ հաշվի առնելով սովորողի ոչ միայն ուժեղ, այլև նաև թույլ կողմերն ու անհատական նախասիրությունները: Ընդ որում, այդ նպատակների քանակն ու բովանդակությունը կարող են էականորեն տարբերվել հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն և առարկայական ծրագրերի բովանդակային պահանջներից, քանի որ դրանք հարմարեցված են կոնկրետ սովորողի կարողությունների առավելագույն ներուժին:

Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաները բաժնում արձանագրվում են աջակցող ծառայությունների տրամադրման բնույթը, միջավայրային հարմարեցումները, աջակցող սարքերի և տեխնոլոգիաների կիրառումը՝ըստ անհրաժեշտության : Օրինակ՝

✔ Անհրաժեշտ է բանավոր խոսքը զուգակցել դիդակտիկ պարագաների հետ, առաջադրանքը պարզեցնել, բաժանել մի քանի մասերի:

✔ Անհրաժեշտ է երեխայի աշխատասեղանը ազատ պահել ուշադրությունը շեղող ավելորդ առարկաներից:

✔ Հավելյալ ժամանակի տրամադրում՝ պատասխանը ստանալու համար:

✔ Օգտագործել տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ ուսուցանվող նոր նյութն ավելի տպավորիչ դարձնելու համար:

✔ Բանավոր քաջալերանք,գովեստ կամ խրախուսանք:

✔ Անհրաժեշտ է պարզեցնել, կրկնել առաջադրանքը, ապահովել հետադարձ կապ:

6. Այս բաժնում նշվում են սովորողի երկարաժամկետ՝ տարեկան նպատակներն ըստ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների/ հատուկ մանկավարժական ծառայություն/: <<Արդյունք>> բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ

7. ԱՈՒՊ-Ի ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այս բաժնում լրացվում են սովորողի նկարագիրը, առաջարկությունները հաջորդ տարվա կամ հաջորդ կրթական շրջանի համար, ծնողի (օրինական ներկայացուցչի) հավաստիացումը, ԱՈՒՊ-ը մշակող խումբը:

ԱՈՒՊ-ի օրինակելի նմուշը ներկայացված է աշխատանքին կցված հավելվածում:

Տես Հավելված 1

Եզրակացություն

Ուսումնասիրելով <<Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը >> թեման՝ եկանք այն եզրակացության, որ ԱՈՒՊ-ը որպես ԿԱՊԿունեցող աշակերտի կրթության կազմակերպման հիմնական փաստաթղթերից մեկը, մեծամասամբ համապատասխանում է իրեն ներկայացված պահանջներին՝ բացահայտելով կարևոր տեղեկատվությունը ներառական կրթության կազմակերպման բոլոր կողմերի մասին: ԱՈՒՊ-ը հնարավորություն է տալիս ոչ միայն կազմակերպել երեխայի կարիքին համապատասխան կրթություն, այլ նաև վերահսկել և գնահատել կատարված աշխատանքը, որը կարող է ապահովել երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքը:Շատ կարևոր է նաև ԱՈՒՊ-ի լրացման ընթացքում հաշվի առնել երեխայի նախասիրությունները, ուժեղ և թույլ կողմերը և հիմնվելով երեխայի ուժեղ կողմերի վրա՝ կազմակերպել հոգեբանամանկավարժական աշխատանքներ թույլ կողմերը զարգացնելու նպատակով , ինչը կապահովի կատարված աշխատանքի արդյունավետությունը : Այսպիսով ՝ԱՈՒՊ-ի կարևորությունը ներառական կրթության գործում շատ մեծ է, քանի որ այն ապահովում է ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը, աշակերտակենտրոն կրթության ապահովումը երեխայի կարիքին համապատասխան, այն նաև հեշտացնում է կատարված աշխատանքի վերահսկումը և այն նպատակների առանձնացումը, որոնք չեն հաջողվել իրականացնել ուսումնական տարվա ընթացքում, քանի որ ԱՈՒՊ-ը առաջին հերթին նախատեսված է ճիշտ և նպատակաուղղված աշխատանքի կազմակերպմանը: Որպես առաջարկություն կարող ենք նշել ծնողների առավելագույն ներգրավվածության ապահովումը՝ ինչպես ԱՈՒՊ-ի լրացման, այնպես էլ դրա իրականացման գործընթացին,որը կապահովի իրական հետադարձ կապ և, որպես արդյունք պարզ կլինի ,թե որքանով է կազմակերված կրթական գործընթացը նպատակաուղղված և արդյունավետ եղել: Պարզ կլինեն նաև ծնողի սպասումները կրթական գործընթացից և դրանց իրատեսական լինելը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Զեկույց: 11 էջ:

2. Միքայելյան Օ. ՀՀ հանրակրթությունում ներառված սովորողի ձեռքբերումների գնահատման շուրջ: «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր: Եր., ԵՊՄՀ, 2014: 48-54 էջ:

3. Ներառական կրթությունը Հայաստանում: (Հոդվածների ժողովածու):

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, Եր., 2003: 98 էջ:

4. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների բազմամասնագիտական թիմի վերապատրաստման դասընթացների բովանդակային նյութերի փաթեթ: Եր., 2010: 18 ժամ,102 էջ:

5. ԱՈԻՊ (Անհատական ուսուցման պլան) խորհուրդներ ուսուցիչներին- Հ Ադամյան

Հավելված1

ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի
դեկտեմբերի 30-ի N 88-Ն հրամանի հավելված

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ
1. ՍՈՎՈՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐ
1.1 Ազգանուն, անուն, հայրանուն՝
1.2 Ծննդյան վայր՝
1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝
1.4 Սեռը՝ □ իգական □ արական
1.5 Քաղաքացիությունը՝
1.6 Բնակության հասցեն՝
1.7 Ուսումնական հաստատությունը՝
1.8 Դասարանը (նշել ուսումնական տարին)՝
1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները՝
1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ՝
2. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2.1 Հաշմանդամություն □ ունի □ չունի
2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում _____ _____

_____

2.3 Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանն ըստ սովորողի խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կապված խնդիրների:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	**Աջակցության աստիճան**			
	1-ին	**2-րդ**	**3-րդ**	**4-րդ**
Խոսքի և լեզվի				
Հաղորդակցման				
Լսողության				
Տեսողության				
Ինտելեկտի (մտավոր)				
Հուզական				
Վարքի				
Շարժունակության				

2.4 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

3. ՍՈՎՈՐՈՂԻՆ, ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԾՆՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ			
3.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՄԱՆԿԱՎԱՐԺ	ԾՆՈՂ	ՍՈՎՈՐՈՂ
3.2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՄԱՆԿԱՎԱՐԺ	ԾՆՈՂ	ՍՈՎՈՐՈՂ
3.3 Սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գրաֆիկ			
Հատուկ մանկավարժական ծառայություն	**Տևողություն**	**Ծավալներ**	**Ծառայությունների տրամադրման գրաֆիկ**
լոգոպեդ			
տիֆլոմանկավարժ			
սուրդոմանկավարժ			
օլիգոֆրենոմանկավարժ			
Հոգեբանական ծառայություն	**Տևողություն**	**Ծավալներ**	**Ծառայությունների տրամադրման գրաֆիկ**
հոգեբան			

Սոցիալ մանկավարժական ծառայություն	Տևողություն	Ծավալներ	Ծառայությունների տրամադրման գրաֆիկ
սոցիալական մանկավարժ			
4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ			
Տվյալ տարում ուսումնական պլանով նախատեսված առարկաներ	Առարկաներ, որոնք սովորողն ուսումնասիրում է տվյալ ուսումնական տարում		Առարկաներ, որոնց համար անհրաժեշտ է անհատական պլանավորում
5. ՍՈՎՈՐՈՂԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ			
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ _____			
Առարկայի ուսուցիչ՝ _____ Ուսուցչի օգնական՝ _____			
Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով: 1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ			

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնամեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ	Ժամկետ	Արդյունք
1.	•			

	•			
	•			
	•			
2.				

6. ՍՈՎՈՐՈՂԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
6.1 ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով: **1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ**
Լոգոպեդ _____

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ	Ժամկետ	Արդյունք
1.	•			
	•			
	•			
	•			
2.				

Տիֆլոմանկավարժ _____				
Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ	Ժամկետ	Արդյունք
1.	•			
	•			
	•			
	•			
Սուրդոմանկավարժ _____				
Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ	Ժամկետ	Արդյունք
1.	•			
	•			
	•			
	•			
Օլիգոֆրենոմանկավարժ _____				
Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ	Ժամկետ	Արդյունք

1.	●			
	●			
	●			
	●			

6.2 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հոգեբան _____

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5-շատ լավ

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ	Ժամկետ	Արդյունք
1.	●			
	●			
	●			
	●			

6.3 ՍՈՑԻԱԼ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական մանկավարժ _____

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորային համակարգով:

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5-շատ լավ

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա-մեթոդական աջակցություն, միջավայրային հարմարեցումներ,	Ժամկետ	Արդյունք

		աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ		
1.	●			
	●			
	●			
	●			

7. ԱՌԻՊ-Ի ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

7.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԿԱՄ ՀԱՋՈՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

_____

_____

_____

_____

_____

Սովորողի կրթության արդյունավետ իրականացման համար առաջարկվում է՝

□ **Սովորողի կրթությունը կազմակերպել անհատական ուսուցման պլանով**

● Հետևյալ հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներով (նշել բոլոր անհրաժեշտները)

_____ _____

_____ _____

_____ _____

● Հետևյալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմամբ (նշել բոլոր անհրաժեշտները)

□ Հատուկ մանկավարժական ծառայություն (լոգոպեդ, օլիգոֆրենոմանկավարժ, սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ)

□ Սոցիալական մանկավարժի ծառայություն

□ Հոգեբանական ծառայություն

□ **Իրականացնել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝**

□ _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) խնդիրներով պայմանավորված մանկավարժահոգեբանական աջակցության _____ աստիճանից _____ աստիճան փոփոխելու նպատակով:

□ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը չեղարկելու նպատակով:

Գնահատման հիմնավորում _____

ԾՆՈՂԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ) ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ

Ես՝ _____ս, սույնով հավաստիացնում եմ, որ մասնակցել եմ երեխայիս՝ _____ ԱՈՒՊ-ի մշակման գործընթացին և գիտակցում եմ, որ սույն ԱՈՒՊ-ի տարեկան և կարճաժամկետ նպատակներն ու դրանց իրականացման գործընթացը հարմարեցվել և պարզեցվել են երեխայիս կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին համապատասխան, և որ իմ երեխայի կրթության արդյունքներն ու ձեռքբերումները գնահատվելու են ըստ իր ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների:

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ԱՈՒՊ-ը մշակող խումբ՝

	Ազգանուն, անուն	Պաշտոն	Ստորագրություն
1.	_____	_____	_____
2.	_____	_____	_____
3.	_____	_____	_____
4.	_____	_____	_____
5.	_____	_____	_____

Հաստատված է՝	
_____ **հանրակրթական ուսումնական հաստատություն**	_____ **տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն**
Տնօրեն՝ _____ _____ (անուն, ազգանուն)	Տնօրեն՝ _____ _____ (անուն, ազգանուն)

(ստորագրություն) Ամսաթիվ՝ ԿՏ	(ստորագրություն) Ամսաթիվ՝ ԿՏ